ՏԱՐՈՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Է.Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Մկրտիչ Խրիմյանի՝ Վասպուրականում ծավալած հայրենանվեր գործունեության համբավը հասել էր Տարոն, Մուշ: Տարոնահայությունը իր ցանկությունը հանրագրերի ձևով արտահայտեց Կ.Պոլսի Ազգային ժողովի առաջ: Ազգային առժամանակյա խառն ժողովը, անսալով տարոնահայության խնդրանքին, Խրիմյանին նշանակեց Տարոնի հոգևոր առաջնորդ և Սբ.Կարապետ վանքի վանահայր[1], նրա վրա թողնելով Վարագա վանահայրությունը ևս: Ստանալով ժամանակի պատրիարքական տեղապահ Ստեփան արքեպիսկոպոսի կոնդակը և Բ.Դռան ֆերմանը, Խրիմյանը Գ.Սրվանձտյանցի ուղեկցությամբ մեկնեց Տարոն՝ իր հետ վերցնելով Վարագա վայրյա տպագրական մեքենան: Նրա ժամանակակից Երեմիա Տկանցը վկայում է: «Ի 1862 ի օգոստոս ամսոյ 30 հասանէ ի Մուշն ի վանս սուրբ Կարապետի վարեալ զպաշտոն իւր»[2]: 1862թ. աշնանը Խրիմյանն արդեն անցել էր իր պարտականությունների կատարմանը:

Սբ.Կարապետի վանքը ուներ մեծ հարստություն՝ գյուղեր, արոտավայրեր, շարժական և անշարժ գույք[3]: Այդ հարստությունը մսխվում էր տեղական հոգևոր և աշխարհիկ վերնախավի՝ միաբանության պորտաբույծ վարդապետների, վանահոր, նրա փոխանորդի, մերձակա գյուղերի ռեիսների, աղաների և համփաների կողմից: Վանքի հարստությունից իրենց բաժինն ունեին նաև քուրդ շեյխերն ու բեկերը: Վանքի միաբանությունը փշելով ընդունեց Խրիմյանին: Նորընտիր վանահոր առաջին գործը եղավ տնտեսական խորհրդի կազմակերպումը, խիստ հսկողություն սահմանելը վանքի հասույթների վրա, դրանք ազգօգուտ նպատակներով օգտագործելու համար: Կազմվեց վանքի բարեկարգումների ծրագիր, իսկ Մուշում, ժողովրդի հավանությամբ, հաստատվեց 12 անձից բաղկացած Ազգային ժողով, որի նախագահ և առաջնորդական փոխանորդ նշանակվեց Մամբրե վարդապետ Մամիկոնյանը, որը Խրիմյանին ընդդիմադիր խմբից էր: Դիվանագիտական այդ քայլով Խրիմյանը ցանկանում էր հաշտության ձեռք մեկնել իր ընդդիմադիրներին՝ միասնական ուժերով հարստահարություններին դիմակայելու համար: Սակայն այդ նրան չհաջողվեց: Իզուր չէր Երեմիա Տկանցը գրում. «Մամբրե վարդապետ Մամիկոնեան դարանամուտ լեալ նմա, հարուցաներ ներքին և արտաքին խոչ և խութ, քանզի ինքն իսկ ցանկայր ժառանգել այն պաշտոն առաջնորդական և վանահայրական»[4]: Միաբանության և նորեկ վանահոր միջև ծայր առավ երկարատև մի պայքար, որի հիմքը տնտեսական գործոնն էր[5]: Դա սովորական աթոռակռիվ չէր, այլ պայքար երկու տարբեր սոցիալական խմբավորումների

---

[1] Վանքը հռչակվել էր դեռևս վաղ միջնադարից, այստեղ վանահայր էր եղել հայտնի փիլիսոփա Զենոբ Գլակը: Այդ պատճառով այն հաճախ կոչվում էր Գլակա վանք: Աշխարհագրական դիրքի պատճառով (վանքը գտնվում էր Ինգակնյան լեռների վրա) այն կոչվում էր նաև Ինգակնյան վանք: Սուրբ Կարապետ անվանումը վանքը ստացել էր ավելի ուշ, միջնադարում:

[2] Մատենադարան, ձեռագիր 4177, էջ 44:

[3] ԳԱԹ, Հ.Առաքելյանի ֆ., գ. 182, էջ 11, Մեղու, 1863, №197:

[4] Մատենադարան, ձեռագիր 4177, էջ 44:

[5] Նույն տեղում, էջ 72:

միջև: Ժողովրդի ծոցից դուրս եկած վարդապետը պայքարում էր նրա շահերի համար, ընդդեմ սեփական և այլազգի ցեցերի: Կառավարական պաշտոնյաները դաշն են կնքում ընդդիմադիր խմբակցության միաբանների հետ՝ Խրիմյանին հեռացնելու կամ մեջտեղից վերացնելու համար: Միաբանության անդամ վարդապետները Խրիմյանին ներկայացրին վանքի տնտեսության հաշիվը այն տեսքով, որ այդ հարուստ վանքն ունի 100.000 դուրուշ պարտք, և այն ծանրանալու է նոր վանահոր վրա: Դրանով ակնկալվում էր վախեցնել Խրիմյանին և իր կողմնակիցների հետ միասին փախցնել վանքից: Սակայն այդ միջոցն ապարդյուն անցավ: Խրիմյանը ծավալեց եռանդուն գործունեություն: Նա գտնում էր, որ անհրաժեշտ է բացել ժողովրդի աչքերը, սթափեցնել նրան «մահանման քնից», ազգային ինքնագիտակցության զգացումը սերմանել նրա մեջ: Այդ նպատակն իրականացնելու միջոցներն էին դպրոցն ու մամուլը: Սբ.Կարապետի վանքում բացվում է նոր «Ժառանգավորաց» վարժարան, որի տնօրենն ու գլխավոր ուսուցիչը Խրիմյանի հրահանգով դառնում է Գարեգին Սրվանձտյանցը: Այս «Ժառանգավորացը» Վարագա վարժարանի հետ համեմատած, ուներ առավել աշխարհիկ թեքում, ուսուցիչների գերակշռող մասը աշխարհականներ էին, դասավանդվող առարկաները՝ առավելապես աշխարհիկ գիտելիքներ:

1863 թ. ապրիլից վանքում սկսվում է հրատարակվել «Լրատար Արծվիկ Տարոնո» երկշաբաթաթերթը, որի տիտղոսաթերթին նշված էր՝ «Թռուցեալ թևօք Վասպուրական Արծվոյն»: Դրանով լրատարը հայտնում էր իր հավատարմությունը «Արծվի Վասպուրականի» գաղափարներին: Լրատարի խմբագիրը «արծվո ճետն էր», դարձյալ Գարեգին Սրվանձտյանցը: Մեծ դեր կատարեց «Արծվիկ Տարոնոն»՝ հայաշատ այդ վայրի առաջին տպագիր պարբերական օրգանը: Այն լույս էր տեսնում ժողովրդին հասկանալի, աշխարհաբար լեզվով, բացում նրա աչքերը, դրդում նրան պայքարել շահագործողների՝ «գայլերի ոհմակի դեմ»: «Արծվիկը» մերկացնում էր տեղական կառավարական պաշտոնյաների կամայականությունները, ժողովրդի բողոքի ձայնը հնչեցնում օսմանյան մայրաքաղաքի հայության, Ազգային ժողովի և Բ.Դռան ականջին: Լրատարը քննադատում էր նաև հայ հոգևորականության որոշ ներկայացուցիչների քսությունները, զեղծումները, ազգային հարստությունը վատնելու և գողանալու անհագ կիրքը, միջոցների մեջ խտրություն չդնելու, սպանությունների և կաշառքի միջոցով դիրքի և հոգևորական բարձր աստիճանի հասնելու զազրելի գործերը:

Խրիմյանը չէր կարող իրեն կաշկանդել խմբագրի կամ ուսուցչի գործունեությամբ: Նա, իհարկե, հսկում էր և՛ տպարանի, և՛ դպրոցի աշխատանքները, բայց նրա գործունեության ոլորտը ավելի լայն էր: Նա իր առաջին գործն էր համարում «կարելի եղածին չափ տարոնեցվոց հույսը պսակել, այսինքն աղքատին իրավանց պաշտպան կենալ, օգնության հասնել տնանկին, փրկելով զիրենք կեղեքիչներուն ձեռքեն»[6]: Խրիմյանն աշխատում էր գեթ փոքր-ինչ թեթևացնել տարոնահայության վիճակը քուրդ ցեղապետերի, թուրք պաշտոնյաների, նաև հայազգի ցեցերի հարստահարություններից: Պայքարի միակ զենքը բողոքն էր, որին լծվեց Խրիմյանի ողջ խումբը. ինքը՝ հոգևոր առաջնորդն ու վանահայրը, Մուշում հաստատված քաղաքական ժողովը, «Արծվիկ Տարոնո» երկշաբաթերթը: Նրանք պահանջում էին բարեկարգություն, Ազգային Սահմանադրության գործադրումը գավառներում: Խրիմյանի

[6] ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 141, էջ 11:

և Սրվանձտյանցի կազմակերպած բողոքագրերը նկատելի հետք թողին տարոնահայության ազգային ինքնագիտակցության զարգացման, նոր գաղափարների ձևավորման վրա: Սկսվեց մի երկարատև պայքար «անիրավության և սանձարձակ բռնության դեմ»[7]: Տարոնահայությունն ըստ արժանվույն գնահատեց իր նոր հոգևոր առաջնորդին, որը հանձն էր առել ամեն զոհողություն ու հալածանք և անվարան առաջ էր տանում ժողովրդին օգնելու իր գործը: Տարոնահայությունն էր, որ Խրիմյանին տվեց նրա ողջ կյանքի ընթացքում ուղեկցող պատվանունը՝ Հայրիկ... Եվ իրավացի էր Երեմիա Տեկանցը, երբ գրում էր. «Մեծագույն մասն ժողովրդյան աշխարհին ի կողմն Խրիմյանի էին, պաշտեին և պաշտպանեին զնա և զխումբն նորա»[8]: Խրիմյանի առաջնահերթ խնդիրը հայ գյուղացու վզին ծանրացած թաշիր (աշար) հարկի գանձման կարգավորումն էր: Ըստ օրենքի, այն պետք է գանձվեր ժողովրդից նրա ստացած բերքի և եկամտի 1/10-ի չափով: Բայց արքունի հարկահավաքները վաղուց եղծել էին այդ օրենքը: Հարկը համարյա միշտ գանձվում էր ավելի մեծ չափով և բնատուրքի փոխարեն դրամ էին պահանջում այն ժամանակ, երբ բերքի արժեքը մի քանի անգամ բարձրացել էր: Ծայր աստիճան հուսահատված ժողովուրդը գտնվում էր քայքայման եզրին: Կառավարական պաշտոնյաներն ու հարկահավաքները իրենց գործունեության ընթացքում աջակցություն էին ստանում տեղերի հոգևոր առաջնորդներից: Սակայն նորեկ հոգևոր առաջնորդը նման մերձեցման չէր գնում: Ավելին, Խրիմյանը ոչ միայն չի օժանդակում Բաղեշից Մուշ եկած հարկահավաք Շնքի էֆենդուն, այլև կազմակերպում է գյուղապետերին՝ միասնաբար հրաժարվել թաշիրը դրամով վճարելուց: Այդ միասնությունը շուտով քայքայվում է Խրիմյանին թշնամի խմբակցության, Սբ. Կարապետի միաբանության և Տարոնի աղայական վերնախավի սադրանքներով: Նրանցից մի քանիսը թուրք գայմագամին հաղորդում են, որ իրենց կազմակերպողը հոգևոր առաջնորդն է: Թուրք պաշտոնյան իր մոտ է կանչում Խրիմյանին, սպառնում, որ իրեն չօժանդակելու դեպքում բողոքագիր կուղարկի Բ. Դռանը և հոգևոր առաջնորդին կմեղադրի պետական գանձարանին վնաս հասցնելու և դավաճանության մեջ: Հարկահավաքի լրատվությամբ Մուշ է գալիս մյութեսարիֆը, որին Սբ.Կարապետի միաբանությունը դիմավորում է՝ ամբաստանելով Խրիմյանին. «Խրիմյան ունի կազմյալ ի մեջ քաղաքի գաղտնի ժողով ընդդեմ տաճկական ժողովին, ի ռուսահայոց կասկածավորս բերյալ բնակեցուցանե ի մեջ վանս, ժողովուրդն ապստամբության գրգռե, արգելու տալ զմաքս և տասանորդ և այլ անլուր բանս...»[9]:

Մատնության լուրը լսող գյուղացիները հարձակվեցին վարդապետների վրա, որոնք մազապուրծ փախան և թաքնվեցին իրենց խցերում: Իսկ մեծահարուստ Մամիկոնյան Վարդան աղան հավաքում է «Արծվիկ Տարոնոյի» թվերը, նրա հոդվածները աչառու թարգմանությամբ, հայերեն բնագրերի հետ միասին հանձնում թուրք պաշտոնյային՝ Խրիմյանին և նրա խմբակցությանը ներկայացնելով իբրև քաղաքականապես անբարեհույսների: Թարգմանված հոդվածներում շեշտը դրվում էր նրանցում արտահայտված ազգային-ազատագրական գաղափարների վրա, ուր Խրիմյանը ներկայացվում էր իբրև ժողովրդին ապստամբության գրգռող անձնավորություն:

---

[7] Կ. Մասունի, Պատմություն Տարոնի աշխարհի, Պեյրութ, 1957, էջ 231:

[8] Մատենադարան, ձեռագիր 4177, էջ 72:

[9] Նույն տեղում, էջ 53:

Հակառակորդ հոգևորականները ձեռնարկում են ավելի գործուն քայլեր Խրիմյանին Տարոնից իսպառ հեռացնելու համար: Գործի է դրվում հին և փորձված միջոցը՝ մահափորձը: Դրա մասին գուժում է «Արծվիկը»[10]: Մահափորձը կատարվում է 1863թ. մայիսի 22-ին, ապա կրկնվում է 27-ին: Անհաջողությունից հետո թշնամի վարդապետները վարձում են քուրդ ավազակի, որը Խրիմյանի տեսքից ազդված չի կարողանում կատարել պատվերը և ծունկ չոքելով նրա առաջ, խոստովանում է ամեն ինչ: Երրորդ անգամ կրկնվում է մահափորձը մայիսի 29-ին: Այդ ընթացքում Բիթլիսի մյութեսարիֆի ամբաստանությունը հասել էր Բ.Դուռ, և թուրքական արքունիքը, պատրիարքարանի միջոցով, Խրիմյանին կանչում է Կ.Պոլիս, քննելու նրան ներկայացրած մեղադրանքները: Դրանց հետևանքով 1864թ. ժամանակավորապես դադարեց «Արծվիկի» հրատարակությունը: Այդ մասին Կ.Պոլսի «Ժամանակը» գուժեց արևմտահայությանը[11]: Ավելի քան երկու ամիս ու կես Խրիմյանը Կ.Պոլսում թակում է բազմաթիվ ազգային հաստատությունների դռներ, մինչև հաջողվում է պատրիարքին և Ազգային վարչությանը հանձնել իր տեղեկագիրը: Այդ փաստաթղթով Խրիմյանը փայլուն տրամաբանությամբ արդարանում է, ինքն իր կողմից մեղադրում Բիթլիսի գայմագամին, որ ժողովրդին կեղեքելով առավել մեծ հարված է հասցնում արքունի գանձարանին, քանի որ քայքայված գյուղացին դառնում էր անվճարունակ[12]:

Այդ ընթացքում պատրիարքարանը մայրաքաղաք է կանչում ընդդիմադիր վարդապետներին՝ վանական խնդիրները քննարկելու համար: Անմեղ և արդար ճանաչված հոգևոր առաջնորդն ու վանահայրը ցուցաբերում է քրիստոնեական ներողամտություն և մեծահոգաբար ներում է խռովարար վարդապետներին: Նրանք միասին վերադառնում են Տարոն: Վերսկսվում է լուսավորական հայրենանվեր գործունեությունը: «Արծվիկը» վերահրատարակվում է՝ ընդլայնելով իր թռիչքի ոլորտները, իր ձայնը հասցնելով մինչև Արևելյան Հայաստան: Մեծ գործ է կատարվում Տարոնի առաջնորդության մեջ գտնվող գյուղերում, ապա նաև վանքերում վարժարաններ բացելու ուղղությամբ: Խրիմյանի խումբը առաջ է տանում դպրոցաշինության գործը: Բացատրական աշխատանք է տարվում գյուղացիների մեջ, նշվում ուսման և կրթության անհրաժեշտությունը թե տնտեսական, թե քաղաքական նկատառումներով: Մեծ աշխատանք է ծավալվում Տարոնում Ազգային սահմանադրությունը գործադրելու ուղղությամբ, որը թույլ կտար գյուղացուն և արհեստավորին մասնակցություն ունենալ ազգային-հասարակական կյանքում: Քննադատական խոսք է ուղղվում Կ.Պոլսի Ազգային վարչության անդամների, այնտեղ ծվարած փափկակենցաղ հոգևորականության հասցեին, որոնք անտարբեր էին Հայաստանի և հայրենաբնակ ժողովրդի վիճակի նկատմամբ: Դեպի ժուլովուրդը և գավառը գնալու հրավեր կոչերով Խրիմյանն իր խմբով հիշեցնում է ավելի ուշ երևան եկած նարոդնիկներին. «Դեռ չտեսանք Պոլսո ձայնով ազգասեր և ոսկիով փառասեր անձինքներեն մեկ քանիսը այցելության աչքով և ոտքով պտտեին ի Հայաստան, դեռ չունին Հայաստանի վրա ուղիղ գաղափար: ...Սրբազաններ, գավառներ գնացին ձեռաց: Վարչություն, Հայաստանի մեջ մեկ հայուն կյանք չմնաց, չմնաց, չմնաց...»[13]:

---

[10] Արծվիկ Տարոնո, 1863, №5:
[11] Ժամանակ, Կ.Պոլիս, 1864, №47:
[12] ԳԱԹ, Խրիմյան ֆ., գ. 141, էջ 11-17:
[13] Արծվիկ Տարոնո, 1864:

Որոշ ժամանակ անց ընդդիմադիրները սկսում են իրենց նախկին քայքայիչ աշխատանքը: Այս անգամ նրանք կարողանում են իրագործել իրենց մտադրությունը՝ զենքի ուժով դուրս հանել Խրիմյանին վանքից: Գյուղացիությունը ոտքի կանգնեց իր Հայրիկին պաշտպանելու համար: Սկսվեց փոխադարձ հրաձգություն: Մակայն Խրիմյանն արգելեց գյուղացիներին շարունակել պայքարը և թողնելով ամեն ինչ, մեկնեց Կարին՝ այնտեղից Կ.Պոլսի կենտրոնական վարչությանը դիմումներ հղելու համար: Դա 1865թ. ամռանն էր: Այս անգամ արդեն մեկընդմիշտ փակվում են «Արծվիկ Տարոնո» երկշաբաթաթերթը, Սուրբ Կարապետի «Ժառանգավորացը», մյուս վանքերում բացված վարժարանները: Հաջողությամբ սկսված լուսավորական մեծ գործը ներքին և արտաքին թշնամիների հարվածների տակ ընդհատվում է:

Հակառակորդներն իրենց հաղթանակն ապահովելու համար կեղծ հանրագրեր են պատրաստում, հեռագրեր հղում Բ.Դուռ և պատրիարքարան, Խրիմյանին դարձյալ մեղադրելով պետական դավաճանության մեջ: Նրանք հեռագրում են. «Մենք՝ Մշո հայ ազգս երեք տարիե հետե կգրենք, թե զԽրիմյան չենք ուզեր մեր մեջ, քանզի պետության անհավատարիմ և ազգին վտանգավոր մարդ է. այսքան վարդապետք վկայեցին, դարձյալ չլսեցիք. վերջապես մենք մեր ուզածն ըրինք և ինքը մեկնեցավ... վերջին ձայնիվ կբողոքենք՝ Խրիմյան չենք ուզեր»[14]: Հեռագիրն սպառնում էր, որ եթե պատրիարքարանը պաշտպանի Խրիմյանին, իրենք պատրաստ են Կարինում դատ վարել նրա դեմ՝ Կարնո կուսակալի և Բ.Դռան աջակցությամբ:

Ամիսներ անց պատրիարքարանը իբրև քննիչ, Տարոն՝ Մուշ և Սբ.Կարապետի վանք է ուղարկում Կարնո հոգևոր առաջնորդ Հայուրյուն Վեհապետյանին: Քննության արդյունքները հօգուտ Խրիմյանի էին: Վեհապետյանը հաստատում է Խրիմյանի անմեղությունը, նրա հավատարմությունը սահմանադրական ոգուն, բարձր գնահատում նրա ջանքերը վանքը բարեկարգելու ուղղությամբ: Ելնելով դրանից, պատրիարքարանի հրահանգով խռովարար վարդապետներից 6 հոգի՝ Արիստակես Ղլճյանը, Խորեն Շահնազարյանը, Եսայի Ղևոնդյանը, Հակոբ Գրիգորյանը, Գաբրիել Խաչատուրյանը և Կարապետ Եսայանը աքսորվում են Երուսաղեմ: Դա ծանր տպավորություն է թողնում երկու խմբակցության վրա հավասարապես: Մակայն պատրիարքարանը չի ընդունում սկզբունքային որոշում՝ Խրիմյանին իր հոգևոր պաշտոնում վերահաստատելու համար: Նա գտնում է խնդրի լուծման կոմպրոմիսային ուղի: Խրիմյանի վրա է մնում Վարագա և Սուրբ Կարապետի վանահայրությունը, իսկ Երեմիա Տեկանցը նշանակվում է Տարոնի հոգևոր առաջնորդ: Խրիմյանը դեռևս մնում է Կ.Պոլսում ձեռնամուխ լինելու Տարոնում իրար հետևից կողոպտված հարուստ վանքերի՝ Հովհաննավանքի և Սլիքանա եկեղեցու կողոպտիչներին որոնելու: Նրա այդ և հետագա քայլերը նպատակամղված էին նվազեցնել տարոնահայության հարստահարությունները, դիմակայել գաղթին և պանդխտությանը: «Հասավ այն վերջին կետ, որ պիտի թողու ժողովուրդ յուր բնակասնունդ հայրենիք և տարագիր երթա օտար աշխարհներ ուր դյուր կամ հանգիստ ստանալու կհուսա»[15]: Խրիմյանը ստիպում էր պատրիարքին հարաբերության մեջ մտնել Բ.Դռան հետ, շահագրգռել ներքին գործոց նախարարին, որպեսզի նա իր վճռական խոսքն ասի կառավարական պաշտոնյանե-

---

[14] ԳԱԹ, Գարեգին Սրվանձտյանցի Ֆ., II բաժին, գ. 6:
[15] Ամենայն հայոց Հայրիկ, Պոսթոն, 1957, էջ 152:

ին, որոնք բարենորոգումների անվան տակ մի չարագործ պաշտոնյայի փոխարինում են առավել հմուտ մի ավազակով:

Կ.Պոլսից Կարին գալով, Խրիմյանը տեղում ուսումնասիրում է թուրք պաշտոնյաների գործունեությունը և իր դիտարկումների արդյունքները տեղեկացնում պատրիարքին, որ Մշո հարստահարիչները ոչ միայն և ոչ այնքան բացահայտ գողերն ու ավազակներն են, այլ՝ նրանց գործողության մեջ դնողները, նրանց հովանավորողները, պետական պաշտոնյաները[16]:

Պատրիարք Պողոս Թագաթագյանի հրաժարականից հետո Խրիմյանն իր դիմումներն ուղղում է պատրիարքական տեղապահ Արիստակես Ռափայելյանին և Խառն ժողովի անդամներին՝ գաղթականության դեմն առնելու համար:

Երբ Խրիմյանը Կ.Պոլսում էր, ժողովուրդը փորձով համոզվեց Խրիմյանի և նոր փոխանորդի՝ Մխիթար վարդապետի միջև եղող հսկա տարբերության վրա: Ժողովուրդը բողոքի իր ձայնն է բարձրացնում և դիմումներ հղում, արտահայտելով իր բացասական վերաբերմունքը Մխիթար վարդապետի նկատմամբ. «Որ պիտի առաջնորդդ, ինքն ճամփա չգիտե, որ պիտի ուղղե, ինքն անուղիղ է, որ պիտի ուսուցանե, ինքն տգետ է, որ պիտի լուսավորե, ինքն խավար է»[17]: Ժողովրդի այդ բողոքի ձայնը Խրիմյանը լսելի է դարձնում Կ.Պոլսում, պահանջելով Մխիթարին հեռացնել այդ կարևոր հոգևոր պաշտոնից, նրա փոխարեն Մուշ ուղարկել ժողովրդանվեր մի գործչի: 1868թ. սեպտեմբերին Խրիմյանը Երեմիա Տկանցի հետ մեկնում է Էջմիածին եպիսկոպոս ձեռնադրվելու: Դա նրա երրորդ ճանապարհորդությունն էր Արևելյան Հայաստան: Նրա ցանկությունը ոչ այնքան եպիսկոպոս ձեռնադրվելն էր, որքան կրկին անգամ լինել Արևելյան Հայաստանում, հարաբերություններ հաստատել արևելահայ գործիչների հետ, մտքեր փոխանակել իրենց հուզող խնդիրների շուրջ[18]: Սակայն կաթողիկոսը ի չիք դարձրեց նրա ձգտումը: Երբ Խրիմյանը եպիսկոպոս է ձեռնադրվում «ի վերա տանն Տարոնո», իսկ Տկանցը՝ Խարբերդի վիճակի վրա, Գևորգ Դ-ն ստիպում է նրանց անմիջապես հետ վերադառնալ իրենց թեմերը, զրկելով Էջմիածնից բացի այլ վայրերում լինելու հնարավորությունից:

Արդեն ձմեռ էր, երբ նրանք հասան Կարին. այն ժամանակվա երթևեկության պայմաններում Տարոն ուղևորվելը համարյա անհնարին էր: Բայց Խրիմյանը Կարինում զուր ժամանակ չի վատնում: Նա սպասում էր նոր վալիի գալստյան, որպեսզի որոշ քայլեր ձեռնարկի տարոնահայության հարկային բեռը թեթևացնելու համար: Այդ նպատակով նա հրահանգում է Տարոնում գտնվող Գարեգին Սրվանձտյանցին՝ շուտափույթ Կարին ուղարկել «Մշո աշխարհին վերաբերյալ ամեն թուղթերը, խնդիրները, մազպաթները, ինչ որ կա», նոր նահանգապետին ներկայացնելու, «դարման ու դատաստան պահանջելու»[19]: Իսկ Երեմիա Տկանցն արձանագրում է. «Ուստի գրեցաք Գարեգին վարդապետի գրել ընդարձակ տեղեկագիր հարստահարության և առաքել առ մեզ, զի մատուցուք առ կուսակալն և խնդրեցաք ի նմանե դարման աղետաբեր չարյաց»[20]: Սրվանձտյանցը բարեխղճությամբ կատարում է իրեն տված հանձնարարությունը, գրում է մի ծավալուն տեղեկագիր, ուղար-

[16] Նույն տեղում, էջ 157:
[17] Նույն տեղում, էջ 152–153:
[18] ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 4:
[19] ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., II բաժին, գ.391:
[20] Մատենադարան, ձեռագիր 4179, էջ 51:

կում ուսուցչին, իր կողմից խնդրելով հրատարակել տալ Կ.Պոլսի «Մանզումե-ի էֆքյար» («Մտքերի շարք») հայատառ թուրքերեն լրագրում: «Մանզումեն» հրատարակում է այդ տեղեկագիրը ծավալուն հոդվածաշարով՝ «Մշեցվոց վրա ընդհանուր տեսություն մը» խորագրով[21]: Այն մեծ ազդեցություն գործեց պոլսահայության և օսմանյան կառավարող շրջաններում[22]: Վեզիր Ալի փաշան թարգմանել է տալիս հոդվածը թուրքերեն, առաքում Կարնո կուսակալին, որպեսզի վերջինս տեղեկություն հաղորդի նրա հավաստիության մասին: Կուսակալն ստիպված պատասխանում է, որ հոդվածաշարի բովանդակությունը համապատասխանում է իրականությանը, իսկ հարստահարությունների ցուցակը նույնիսկ թերի է: Պատասխանից անմիջապես հետո մեծ վեզիր Ալի փաշան հրաման է հղում Կարնո կուսակալ Իսմայիլ փաշային՝ անհապաղ գտնել ու բանտարկել Հովհաննավանքի կողոպտիչներին, անձամբ այցելել Մշո մյութեսարիֆություն, կալանավորել Հասնանցի և Ջիբրանցի թոռուններին ու մյուս ոճրագործներին: Իբրև քննիչ Մուշ են մեկնում Օսման պեյն ու Ազգային ժողովի անդամ Խորաճանյան Դանիել էֆենդին: Թուրք քննիչը, քողարկելով Մշո մեջլիսի անդամների չարաշահումները, բոլոր հարստահարությունները բարդում է քրդերի վրա: Այդ տեղեկատվության հիման վրա աքսոր են ուղարկվում քուրդ ազդեցիկ 70 աղաներ: Ալի փաշայի նման գործելակերպը հետապնդում էր եվրոպական դեսպանների աչքին արդարության ջատագով երևալու նպատակ: Փաստորեն, Խրիմյանը և իր սանը կարողանում են Կ.Պոլսի Ազգային ժողովի և թուրքական արքունիքի ուշադրությունը հրավիրել Տարոնի վրա, ստիպել նրանց ձեռնարկել բարենորոգչական ինչ-որ քայլեր: Սակայն Խրիմյանը և արևմտահայ մյուս գործիչները համոզվում են, որ քրդերը գործիք են պետական պաշտոնյաների ձեռքին և հայերը զուր հույսեր են կապում Բ.Դռան հետ[23]:

Խրիմյանն իր ուշադրությունը բևեռում է նաև մի այլ կարևոր խնդրի կարգավորման վրա: Դա հայոց վանքերը հարկերից ազատելու պարագան էր: Կ.Պոլսի պատրիարքական տեղապահին ուղղած իր նամակներում Խրիմյանը փաստարկներով ապացուցում է, որ Օսմանյան կայսրության հաստատումից ի վեր, թուրքական սուլթանները հատուկ ֆերմաններով հավաստել են բոլոր ազգերի հոգևոր հաստատությունների հարկերից ազատ լինելը: Այդ իրավունքը առավել ևս պետք է շեշտվեր Թանզիմաթի արտոնած հավասարության կարգախոսներով: Սակայն ժամանակի ընթացքում հայոց վանքերի մեծ մասը դարձել են հարկատու: Խրիմյանն անհրաժեշտ է համարում հետամտել և նորից վերականգնել նախկին իրավունքները. «Իրավունքը ինքնին կմեռնի, եթե իրավանց տերերը բարձիթողի ընելով լռեն միշտ»[24]:

Չնայած Խրիմյանի դրդումներին և պատրիարքական տեղապահի դիմումներին, հայ առաքելական եկեղեցու հոգևոր հաստատությունները կորցրին իրենց արտոնությունները: Սակայն Խրիմյանը շարունակեց իր պայքարն այդ ուղղությամբ 70-ական թվականներին ևս, երբ ինքը բարձրացավ Կ.Պոլսի հայոց պատրիարքի գահին:

Նորընծա եպիսկոպոսի ամենակարևոր գործը Կարնո նահանգապետին ուղղած դիմումն էր, որի մեջ կային գործուն առաջարկություններ տարո-

---

[21] Մանզումեի էֆքյար, 1869, № 892, 895, 898, 902, 918, 921, 923:
[22] Է.Կոստանդյան, Գարեգին Սրվանձտյանց, Ե., 1979, էջ 98:
[23] Մատենադարան, ձեռագիր 4179, էջ 75:
[24] Ամենայն հայոց հայրիկ, էջ 167:

նահայության կյանքը բարելավելու ուղիների մասին: Այդ փաստաթուղթը մեզ է հասել Գյուտ Աղանյանցի հրատարակած «Դիվանի» ԺԳ հատորից: Հրատարակիչը այն վերնագրել է «Խրիմյան Հայրիկի բողոքագիրը Մշո հայ ժողովրդի հարստահարությունների նկարագրով»[25]: Հրատարակիչը ծանոթագրություններում նշում է, որ բողոքագիրը թվական չունի: Հետազոտությունների ընթացքում պարզեցինք գրության ճշգրիտ թվականը, նույնիսկ ամիսը: Դա հնարավոր դարձավ՝ համեմատելով Խրիմյանի նամակները Տեկանցի «Տոհմային հիշատակարանների» հատորի բովանդակության հետ[26]: Բողոքագիրը Կարնո կուսակալին է մատուցվել 1869թ. հունվար ամսին: Այդ մասին Խրիմյանը հաղորդում է Կ.Պոլսի պատրիարքական տեղապահ Արիստակես եպիսկոպոս Ռափայելյանին[27]:

60-ական թվականներին Խրիմյանը և իր զինակիցները կարծում էին, թե Բ.Դռանը և պատրիարքարանին ուղղած բողոքները, տեղեկագրերը և բարենորոգման ծրագրերը կարող են ունենալ դրական հետևանքներ, որովհետև պատրիարքարանի միջնորդությամբ կառավարությունը կարող է փոխել իրենց պաշտոնը չարաշահող վալիներին, մյութեսարիֆներին, մյուդիրներին և այլոց: Սակայն եթե նույնիսկ չլինեին ակնկալիքներ կենտրոնական կառավարության նկատմամբ, անհրաժեշտ էր բողոքել ու դրդել, որպեսզի ժողովուրդը անմռունչ չհնազանդվի իշխողի և ուժեղի կամքին: Խրիմյանը բողոքում է, որ «Մշո երկրի պես շահութաբեր ու արդյունավետ երկիրը, որը կարող է լցնել պետական գանձարանը իր առատ հարկերով, հարստահարությունների պատճառով չկա նրա նման «թշվառ, խեղճ, բարձիթողի եղած երկիր»: Կառավարության բարենորոգումների ծրագիրը մնացել է թղթի վրա, եզրակացնում է Խրիմյանը և հայտարարում, որ Տարոնում գոյություն չունի «ոչ տերության աչք, ոչ օրինաց աչք և ոչ ևս հավատարիմ պաշտոնեից աչքը»: Խրիմյանը բարձր է գնահատում ժողովրդի, մասնավորապես գյուղացիության վաստակը[28]: Այդ պատճառով էլ իր պարտքն է համարում պաշտպանել նրան, գյուղացիությանը, մատնանշել այն «աղբյուրները», որոնք պատճառ են դառնում գյուղացիության ունեզրկմանն ու քայքայմանը, երկիրն ամայացնող ավերիչ գաղթին:

Հարստահարությունների առաջին աղբյուրը նա համարում է Հայաստանում բնակություն հաստատած քրդական ցեղերի, մասնավորապես Հասնանցի և Ջիբրանցի ցեղերի ցեղապետերին, որոնք իրականացնում էին Մշո փաստական իշխանությունը, պաշտպանություն էին գտնում պետական պաշտոնյաների կողմից, նրանց հետ կիսում ժողովրդից հափշտակածները[29]: Ուշագրավ է մի հանգամանք. Խրիմյանը հարստահարությունների աղբյուրը համարում է ցեղապետերին, ոչ թե քուրդ ռայային, որոնք հայ գյուղացու նման «իբրև գերի և ծառա են թոռուններում ձեռք»: Դա ընդգծում է Խրիմյանի ժողովրդավարական մոտեցումը, նա նույն «կանգուն»-ներով է չափում երկու ազգերի շահագործողներին մի կողմից և հարստահարվող գյուղացիությանը մյուս կողմից: Այդ չարիքը վերացնելու համար Խրիմյանն առաջարկում էր աքսորել «ամենազորեղ առաջնորդներին, կտրել իրենց զինական ուժից, իսկ հառարակ

---

[25] Դիվան հայոց պատմության, հ. ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 462-470:

[26] Մատենադարան, ձեռագիր 4179, Ամենայն հայոց Հայրիկ, էջ 154/29 հունվարի, 1869թ. նամակը: Ապա հայտնաբերեցինք բողոքագրի բնագիրը ԳԱԹ-ի Գ.Սրվանձտյանցի ֆոնդի V բաժնի 4 գործում:

[27] Ամենայն հայոց Հայրիկ, էջ 154:

[28] Դիվան..., էջ 464:

[29] Նույն տեղում, էջ 465:

ժողովրդին «տեգին տեղ մաճ տալով կրթել զիրենք շինական աշխատության մեջ»[30]: Հարստահարությունների երկրորդ աղբյուրը պետության տասանորդ հարկի վարձակալներն են, որոնք բազմաթիվ օրինախախտումներ են կատարում հարկը հավաքելու ժամանակ: Յուրաքանչյուր բերքի տեսակից իր ժամանակին հարկը վերցնելու փոխարեն, հարկահավաքը չափում է բերքը, բայց գանձումը հետաձգում մինչև ձմռան սկիզբը, երբ բերքի տվյալ տեսակը կրկնապատիկ կամ նույնիսկ եռապատիկ թանկացել է: Այդ ժամանակ հարկահավաքը բերքի փոխարեն դրամ է պահանջում եռապատիկ թանկ գներով: Դա գյուղացուն հասցնում է ունեզրկման և քայքայման: Նա չի կարող որևէ տեղ բողոքել, քանի որ տասանորդի հարկը վարձակալողը Մշո կառավարության անդամներից որևէ մեկն է: Հարստահարության երրորդ ալիքը երկրից գաղթած, հեռացած անձնավորությունների տուրքը մնացողներից գանձելու՝ օրենքի ուժ ստացած վաղեմի սովորույթն է: Կան գյուղեր, որոնք առաջներում եղել են բարգավաճ և բազմամարդ: Կյանքի անողոք հարվածների տակ գյուղացին թողել է իր տունն ու տեղը, իր հայրենի երկիրը և գաղթել այլ վայրեր: Տեղում մնացած բնակչությունը ճնշվում է գաղթածների հարկերի ծանրությունից:

Խրիմյանը պահանջում էր վիճակագրական հաշվումներով վճռել այդ խնդիրները և գյուղացուն ազատել տառապանքից: «...Ողորմելի գեղացիները գնացող գաղթականաց ծանր ծանր բեռանց տակ կճնշվեն, մինչդեռ իրենք չքավորութենեն իրենց բաժին տուրքը կարող չեն վճարել, ինչպես կարելի է և ինչ իրավունք է ուրիշի բաժին ինկած տուրքն ևս վճարել»[31]:

Տարոնի հոգևոր առաջնորդի համարձակությունը հասնում է այն աստիճանի, որ գործելով Մուշում, առանց երկնչելու, բացահայտ և բացարձակ մատնանշում է Մշո մեջլիսի գործած չարիքներն ու հարստահարությունները և դրանց ամենամեծ աղբյուրը համարում նրա վատթար վարչության գործունեությունը: Այդ պետական աստիճանավորներին Խրիմյանը համեմատում է ապստամբ քուրդ ցեղապետերի հետ, որոնք իրենց անսանձ, անզուսպ և կատաղի բարքերով ավերում էին երկիրը, ոտքի կոխան դարձնում, անարգել սրի քաշում ժողովրդին, իրենց պատասխանատու չհամարելով պետական ոչ մի մարմնի, անգամ Բ.Դռան առջև: Ահա Խրիմյանի առաջարկության հիմնական բովանդակությունը. «Մշո երկրի մեջ հիմնական բարեկարգություն հաստատելու համար անշուշտ արմատեն կամ նույնիսկ գլխեն սկսելու է, և այս գլուխ և արմատը նույնիսկ Մշո կառավարությունն է յուր ամեն հանգամանոք»[32]: Եվ որպեսզի չկասկածեն, թե հոգևոր առաջնորդը հոգում է միայն քրիստոնյա բնակչության կարիքները, Խրիմյանը մատնանշում է, որ «իբրև մարդ և մարդկային կարեկցությամբ նույն աչքով նկատեցինք նաև իսլամ ժողովրդոց խեղճ և աղքատ վիճակը, որոնցմե շատերը ավուր պարենի անգամ կարոտ ըլլալով կը տառապին չարաչար»:

Կարինի նոր նահանգապետին հանձնելով այդ բողոքագիրը, Խրիմյանը թերահավատ էր նրա կարողությունների և ցանկությունների նկատմամբ, սակայն բողոքում էր, որովհետև նրա բնավորությանն անհարիր էին հլու հնազանդությունը չարին և բռնավորին, որովհետև իր առաջ խնդիր էր դրել

---

[30] Նման կարծիք էր արտահայտում նաև Գ.Սրվանձտյանցը «Մշեցվոց վրա ընդհանուր տեսություն մը» հոդվածաշարում. պատժել քուրդ ռազմական ավազանուն, իսկ նրանց ծառաներին դարձնել նստակյաց, վարժեցնել երկրագործության:

[31] Դիվան..., էջ 468:

[32] Նույն տեղում, էջ 469:

բարձրացնել ժողովրդի ազգային գիտակցության զգացումը, մղել նրան դեպի սոցիալական պահանջներ:

1869թ. ողջ ամեռը Խրիմյանը մնաց Կարինում, իսկ հունիսին արդեն Տարոնում էր և վարում էր Սուրբ Կարապետի վանքի վանահայրությունը: Տեղում նա ձեռնամուխ է լինում վանական բարեփոխումների իրականացմանը: Վանքապատկան հողատարածություններում երկրագործությանը զարկ տալու նպատակով մի հմուտ մասնագետ նշանակվում է երկրագործության տեսուչ:

Տարոնում նս Խրիմյանը չի դադարում հանդիպումները օսմանյան պաշտոնյաների հետ: Նահանգապետի հետ Կարինում ունեցած տեսակցության արդյունքն այն է լինում, որ վերջինս Խրիմյանի հրավերով գալիս է Տարոն: Խորաճանյան Դանիել էֆենդու և մի քանի վարդապետների ուղեկցությամբ Խրիմյանն ընդառաջ է գնում նրան մինչև Մատրավանք: Վալին նրա խնդրանքով ընդունում է Մշո դաշտի գյուղապետերին, զրույց ունենում, հուսադրում, որ կօգնի հարստահարություններին դարման դրնելու խնդրում: Սրամիտ Խրիմյանը այդ մասին նամակում գրում է. «Ճառին տեղն էր Եվրասի եզերք: Աստված տա, որ այս հուսալի ճառին ձայն ջրին ձայն չըլլա»[33]: Բոլոր դեպքերում Տարոնի Հայրիկը մտածում էր, որ անհրաժեշտ է խրախուսել նոր նահանգապետի այդ քայլերը և հանձնարարում էր Կարինում գտնվող Գարեգին Սրվանձտյանցին գովաբանական հոդված գրել և ուղարկել «Մանգումե-ի էֆքյարին»:

Կարճ է տևում խաղաղ աշխատանքը: Քիչ ժամանակ անց դարձյալ գյուխ են բարձրացնում հետադիմական ուժերը: Դեռևս տասնամյակի սկզբին Խրիմյանին դավող գյուղապետերը նորից միավորվում են վանքի միաբանների հակախրիմյանական խմբին և միասնական ուժերով պայքար ծավալում ժողովրդի հաշվին իրենց շահույթներն ապահովելու համար: Վերստին գործի են դրվում Խրիմյանին վարկաբեկելու հին ձևերը՝ կեղծ հանրագիր-հեռագրերը: Խրիմյանը երկար է խորհում Մխիթար վարդապետին և գյուղապետերին հակահարված տալու ուղիների մասին: Սակայն հաղթում են քրիստոնեական ներողամտությունն ու խոհեմությունը: Նա չի ցանկանում թուրքական պաշտոնյայի միջոցով հարված հասցնել հայ վարդապետին: «Մխիթար վարդապետը այս վերջի հեղավոխության մեջ պարագլուխ կայնելով պիտի հուզե որչափ ուժ ունի: Շատ կմտածիմ այս կետին վրա, եթե թողում այնպես և համբերեմ, նա իր չարությունը հառաջ մղելու է անձանձիր կերպով, իսկ եթե քաղաքականության ձեռքով Մշո երկրեն դուրս հանելու ձեռնարկություն ընեմ, այդ միջոցն իրենց սեփական միջոցն է, զոր չեմ ուզեր ի գործ դնել: Ուստի պիտի բողում դարձյալ, որ չարությունը յուր ասպարեզը բանա, հավատալով, թե ճշմարտությունը պիտի հաղթե»[34]: Նման վարվելակերպով նա ապացուցում է, որ իսկապես Քրիստոսի նվիրյալ պաշտոնյա է՝ ազնիվ և ներողամիտ:

Այդ գործողության համար նահանգապետ փաշան բանտարկում է մի քանի տեղացի քուրդ և թուրք աղաների, իսկ դավաղիր գյուղապետերին դիտողություն է անում, ապա նրանցից մի խումբ կանչվում է Կարին՝ պատասխան տալու: Նույնիսկ նման պարագաներում Խրիմյանը տագնապում է: Նա ահազանգում է Կարինում գտնվող Գ.Սրվանձտյանցին, որպեսզի վերջինս տեղեկություններ հավաքի, անհրաժեշտության դեպքում օգնության հասնի Կարին կանչված հայ գյուղապետերին և վարդապետներին: Հրահանգներ

---

[33] ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆ., II բաժին, գ. 404:

[34] Նույն տեղում, գ. 410:

տալու հետ մեկտեղ Խրիմյանն իր վիշտն է արտահայտում իր ազգակիցների ազգակործան ընթացքի համար. «Այդ մարդիկ ազգայինի նկատմամբ միշտ հանցավոր են: Դոքա ամբողջ Մշո երկրին, Սուրբ Կարապետի վանուց մեծամեծ վնասներ հասուցին. դոքա շատ անգամ բարիքներ տեսան և դարձյալ ապերախտեցին ամեն կերպով. մենք իրենց դեմ անհիշաչարությամբ վարվեցանք, այլ իրենք չզգաստացան»[35]: Ամառվա ամիսներն անցան տագնապներով. Խրիմյանը դեգերում էր Մուշից Կարին, Կարինից Մուշ՝ արդարության, հաղթանակի, բայց և ազգակից վարդապետներին վնաս չհասցնելու նպատակով: Սեպտեմբեր ամսին Կ.Պոլսից լուր ստացվեց, որ Սկտիչ Խրիմյանը Կ.Պոլսի Ազգային ժողովում ընտրվել է հայոց պատրիարք:

Բարոյական չափանիշներով արդյունավետ եղավ Խրիմյանի գործունեության տարոնյան շրջանը: Այստեղ նա արժանացավ Հայրիկ պատվանունին: Վասպուրականում և Տարոնում ծավալած ժողովրդանպաստ գործունեության գնահատականը եղավ Կ.Պոլսի պատրիարքի պատվավոր աթոռին բարձրանալը:

ДУХОВНЫЙ ПРЕДВОДИТЕЛЬ ТАРОНА

Э.А.КОСТАНДЯН

Резюме

Решением Константинопольского национального собрания настоятель Варагского монастыря Мкртыч Хримян в 1862г. был назначен епархиальным начальником Тарона и настоятелем монастыря Святого Карапета. Монастырская братия недружелюбно приняла Хримяна и его соратника Г. Срвандзтянца. Богатство этого монастыря служило не национальным целям, а группе мирских и духовных феодалов, а также курдским деребеям и турецким должностным лицам. С назначением Хримяна настоятелем картина резко изменилась. Был создан хозяйственный совет, контролирующий средства монастыря. Началась длительная борьба между сторонниками Хримяна и главными членами братии. На сбереженные средства было основано духовное училище в монастыре Св.Карапета "Жарангаворац", главным учителем которого был Г.Срвандзтянц. В 1863г. был основан и создан двухнедельник "Орленок Тарона". Редактором газеты был Г.Срвандзтянц. Хримян, стремясь облегчить материальное положение народа, вступил в борьбу с турецкими чиновниками, взимавшими с народа непомерные налоги. Таронцы своего защитника называли почетным титулом – Айрик.

В сентябре 1869г. Хримян был избран константинопольским патриархом.

[35] ԳԱԹ, Գ.Մրվանձտյանցի ֆ., II բաժին, գ. 415: